Շահումյան Ա. - «Հայաստանը շախմատային երկիր է». Արամ Իսաբեկյան – թերթ, «Առավոտ», Ե., 04.03.2013

«Ցուցահանդեսը մեկնարկել էր երկու ամիս առաջ, մասնակցել են 30 երիտասարդ ուսանողներ»,-այսօր Շախմատի միջազգային ֆեդերացիայի նախագահական խորհրդի նիստին նվիրված ցուցահանդեսի ժամանակ նշեց Երեւանի Գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը: Պրն. Իսաբեկյանի պնդմամբ Հայաստանը շախմատային երկիր է եւ ոգեւորված է շախմատով. «Թեման յուրօրինակ էր, բազմաթիվ տաղանդավոր երիտասարդների այն հետաքրքրեց, քանի որ շախմատը մեծ հաջողություններ է բերել Հայաստան երկրին»:

Նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանի համոզմամբ, ցուցահանդեսը կլինի ավանդական եւ շարունակելի:

Թերլեմեզյան Գեղարվեստի պետական քոլեջի տնօրեն Աննա Մնացականյանի խոսքով շախմատը մտածողություն է. «Ներկայացված են հրաշալի գործեր, կարծում եմ փորձը կայացել է: Շախմատը, որպես առարկա մուտք է գործել կրթական համակարգ, ինչը նույնպես շատ գովելի է»:

Շախմատի ակադեմիայի նախագահ Սմբատ Լպուտյանն ասաց, որ մտահղացումն իրենն էր եւ դրա մեջ միայն ջերմություն է տեսնում. «Մուտքը շախմատի աշխարհ միայն դրական լիցքեր է բերում, մենք այսօր պետք է հպարտանանք եւ ուրախ լինենք»: Գեղարվեստի ակադեմիայի ուսանող Մարիամ Թադեւոսյանի խոսքով չկա մի հայ քաղաքացի, ով չի հպարտանում իր շախմատիսներով:

Անժելա ՇԱՀՈՒՄՅԱՆ

https://www.aravot.am/2013/03/04/210735/